


436

L III 3



2034

ԿԻՍՆԱՄԱՆՆԵՐ

Տէր-Խմբագիր — Մ . Ս . ԳԱՌՐԻԷԼԵԱՆ

Þi, h

կը հեղու նաւ. Ազգին մէկ կամ միւս հատուածն չէ որ կը տագնապի այլ լուսնադակ ազգն ինքն. Ամբողջ ազգն է որ իւր մոխրոց և աւերակաց ներքեւ կը խլրտի, կանգնեւ կը նկրտի, բայց երկաթէ ձեռաց անողորմ ճնշման տակ ընկ- ճեալ կը մռնչէ: Հայն գոյութեան վճռական միջանքի բռնութեւն է, որոյ ելքն պիտի լինի կեանք կամ մահ:

ՀԱՅԲ

Թերթ մը հրատարակելու խորհուրդն որ յաճախ կը
թեյադրէր մեզ երկու տարիէ հետէ, և որ կանխահաս
կը թուէր մեզ, վերջապէս մարմին կ'առնու այսօր:

Երկու պատճառներ գլխաւորապէս բերին զմեզ յայս նախ մեր ազգային գոյութեան տագնապալից վիճակն որ ազգի բոլոր ոյժերն կը հրաճիրէ ի գործակցութիւն , և երկրորդ գի Հայ գաղթականութիւնք արագապէս ստուարանալով Միապետոյ Նախնոցս՝ պէտք ունին ազգային հաղորդակցութեան կանոնաւոր գործիքի մի :

« ԶԱՅՔ » նպատակ ունի ազգային փրկութեան ստատարել, գաղթականութեանց նիւթական և բարոյական յառաջդիմութեան օժանդակել, և ազգային Փիղիբական զարգացման նպատակել: Ուստի և իւր Էջեր պիտի նուիրուին Հայկական խնդրոյ, Հայոց պատմութեան և լեզուին քննութեան և առողջարանական յօդուածոց: Այս վերջինք ամէն թիւի մէջ անպակաս պիտի լինին և յուսամբ, կարևոր ծառայութիւն մի պիտի մատուցանեն:

Քաջայայտեա եմք թէ մեր համակրողք ինչպէս նաև բոլոր հայրենասէրք պիտի չզլանան մեզ իրենց թանկագին աջակցութիւն :

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՑ ՎԻՃԱԿՆ

ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ՄԸ ՊԵՏԲԸ

Յընթացս անցեալ տասն և հինգ դարուց երբեք Հայ ազգութիւնն գտնուած չէր այնպիսի կացութեան մէջ յորպիսում կը գտնուի այսօր։ Հեռզհետէ կրած էր նա զլուծ գերիշխանութեան և տիրապետութեան զանազան ազգաց, կրած էր Հարստահարութիւն և ողէտ բազում, սակայն այժմ թարբեր արտասուք մի և տարբեր արիւն մի

այլ Մահմետական ցեղերն թո՛ղք ազգութեան գանգ-
լածին խառնել մէկ կողմանէ, չի քրիստոնեայ ցեղերն
տկարացունել և նուազեցունել օսմանեան հողին վրայ՝
միւս կողմանէ։ Այս սկզբնական հաւատարմութիւնն ար-
տաքին ճշմանց պատասխանած է։ Յանձնաժողովներ ան-
ուանելով և մասնախումբեր յղելով ի հարկին մինչև Հա-
յաստանի խորերն իրաց վիճակն քննելու և տեղեկագրե-
լու պաշտօնով։ Սարգսական այս շարժմանց ներքեւէն
թրքական գործունէութեան ուրիշ հոսանք մի սակայն
անդադար ընթացած է իրաց աւելելու զՀայոց Հայաստա-
նէն։

Իտեա այս հակամարդկային և հայաւեր քաղաքա-
կանութեան՝ Եւրոպա համոզուեցաւ թէ Բ. Դուռն գուրկ
է այն տրամադրութիւններէ որովք միայն իւր իշխանու-
թեան շարունակութիւնն ի վերայ քրիստոնեայ ազանց կըր-
նայ անվտանգ թոյլատրուիլ Իսկ Հայք հետամուտ չիլան և
չեն օսմանեան կայսրութեանէն բաժնուելով անկախ տէ-
րութիւն լինիլ, և բազում անգամ յայտարարեցին Սուլ-
թանին կառաւարութեան թէ իրենք անկախութեան
հասնելու թաքուն նպատակ չունին, այլ կըրտազման միայն
ազատութիւն և ապահովութիւն վայելել այն չափերով
որովք միայն կարելի է նոցա յառաջդիմել յօգուտնոյն
ինքն պետութեան։ Թուրքն որ աչաց առջև ունէր միւս
քրիստոնեայ ցեղերուն անկախ վիճակն, չհաւատաց մեր
անկեղծ յայտարարութեան։ Եթէ օսմանեան քաղաքա-
գէտք ուսումնասիրած լինէին Հայոց պատմութիւնն,
լաւ ևս պիտի ճանաչէին զայնս և համոզուած պիտի լի-
նէին թէ նոքա բնաւ որութեամբ տարբեր լինելով միւս
քրիստոնեայ ցեղերէն և ի տարբեր միջավայրի գտնուե-
լով՝ արդարեւ անկեղծութեամբ յօժար են հոյատակ մը-
նաւ օսմանեան գահուն այն պայմանաւ որ թոյլ տրուի
իրենց հետեւիլ դարուն յառաջդիմական հոսանաց։

Օսմանեան կառավարութիւնն ոչ միայն խուլ մնաց
Հայոց արդար պահանջմանց այլ և այնպիսի տգիտու-
թեամբ մի որ Եւրոպական գիւնադիտութեան զար-
մանքն եղած է, մերժեց ճանաչել այն եկեղեցական
կարգի իրաւասութիւններ զորս Պատրիարքարանն կը վա-
յելէր անդատին ի սկզբանէ օսմանեան տիրապետութեան։
Վէր ի վէր յաւելուլ միակ արժանաւոր միջոցն է Հայոց
գանգատներն լռեցունելու՝ ըստ թրքական իմաստութեան,
միջոցն չը յաջողեցաւ սակայն։ Գաւառացի Հայք տեսնե-
լով թէ Պատրիարքարանն իւր քաղաքական հանգաման-
քէն կողոպտուած է ինչպէս եկեղեցական իրաւասութե-
նէն՝ մինչ հարստահարութիւնք ևս քան զիս գոնգակ կը
լինին, մտածել սկսան թէ հարկ է որ իրենք իրենց տար-
րական իրաւունք պաշտպանեն որպէս կարող գտնուին,
ուրեք ուրեք յուսահատական ցոյցեր կատարուեցան,
զորս Բ. Դուռն նկատել ուզեց իբր ապացոյց Հայ ազգի ապս-
տամբական դիտաւորութեանց զորս կանխատեսած լինել
կըկարծէր։ Ո՛վ կրնայ հասկըցունել կառավարութեան թէ
ապստամբութեան նմանոյ այս ցոյցք անխուսափելի ար-
դիւնքն են Տաճիկ քաղաքացեանութեան։ Ո՛վ կը համար-
ձակի ըսել թէ ոչ թէ գոգուեալ Հայք այլ գրգռիչ կառա-
վարութիւնն է պատժապարտ այն ցոյցերու համար, որոց
պատճառաւ այնքանիք կ'աքսորին, կը բանտարկուին և
կը մեռցուին։

Այլ և այլ աղբիւրներէ օր ըստ օրէ մեզ հասնող լու-
րերն կը ցուցնեն թէ գոգուումն տակաւ կ'ընդհանրանայ
բովանդակազգին մէջ։ Բուռն Հայաստանի մէջ Բուրաք սար
սափ կը տիրեն այնպիսի համարձակութեամբ որ բարձ-
րագոյն շրջանակներէ ներքէնեալ լինելու երեւոյթն ու-
նի։ Բուսահատակ համագործ գործնական օժանդակու-
թեան ձեռն կը կարկառեն մեր տառապեալ եղբարց։
Ձեյթուն նորէն ոտքի ելած է։ Ուրեք ուրեք Հայք հայ-
կաբար յետո մղած քրդական յարձակումներ և վրէժ
լուծած են անմեղ արեան։ Անշուշտ անստոյգ լուրեր
ալ կան, կրնան չափազանցութիւններ ևս լինիլ, բայց
ինչ որ ստոյգ է և առանց չափազանցութեան է՝ այն թէ
Հայք բոլոր արթնցած են և գիտակից են այն սպառ-
նալեաց որ ուղղեալ է մեր ազգային գոյութեան եւ
Հայաստանի ապագային, եւ թէ այդ սպառնալիքն
լռեցնելու համար ամենայն գոհողութեանց պատրաստ են
սրպէս ոչ երբէք եղած էին։ Միւս կողմանէ պաշտօն
կը շարունակէ իւր դառն հարուածներ տեղաւ և միան-
գամայն անոյշ խոստումներ ընել միշտ։

Իրաց և զգացմանց այս վիճակ թոյլ չտար մեզ
յուսաւ մոտաւոր խաղաղացման։ Տիրող և տիրեալ տա-
րերաց միջև փոխադարձ անփոտահութեան զգացում մը
կը ծաւալի և իրաց գոնէ նախկին վիճակին վերահաս-
տատումն ևս քան գեւ կը դժուարացնէ։

Ո՛ւր պիտի հանգին այս յուզմունք։ Տէրութիւնք
հաւաքական միջամտութիւն մը պիտի ընեն, քան
զթուով և քան զխօսք աւելի շօշափելի հանգամանք
ունեցող միջամտութիւն մի, ի նպատակ Հայոց։ Ոչ ոք
գիտէ, ինչ պիտի կրնան ընել Տաճկաստանի Հայք, կամ
ինչ կարող են ընել։ Այս հարցման պատասխանել նուազ
դժուարին է։ Պատրիարքարանն իւր ոյժ կորուսած եւ
բոլորովին կազմալուծուելու վտանգին մէջ է։ Ազգային
ժողովոյ ՅԱՀՈԿԱՅԻՆ ի նիստն արգելուեցաւ ոստիկաննե-
րու միջոցաւ։ Պաւառք դրկուած կը մնան կարող
առաջնորդներէ։ Մամուլ ազատութեան ստուերն ան-
գամ չէ մնացած։ Թղթակցութիւնն անգամ կը բռնա-
բարի։ Թող հրապարակային հաւաքումներն որք ան-
հնարին են այժմ, մինչև անգամ առանձին տեսակցու-
թեան մէջ ազգային վիճակին վերայ խոհրդակցիլ գրե-
թէ անկարելի եղած է ի պաճառս ամենուրէք ներկայու-
թեան այն աչալից և բազմունին ճիւղալին որ լրտեսու-
թիւն կը կոչուի։

Իրաց այս վիճակին մէջ չեմք կրնար հասկնալ թէ
Տաճկաստանի Հայք որք այնքան ընդարձակ տարածու-
թեան վերայ սփռեալ են, ինչպէս կարող պիտի լինին
դիրար հասկնալ և ունիցէ մեծ շարժում կազմակերպել։
Տաճկաստանի Հայ ժողովուրդն այսօր մարմին մի չկրնար
համարուիլ և իբր մարմին գործելու անգոր է։

Տաճկահայոց կացութիւնն այնպէս լինելով մեծ
պատասխանատուութիւն կը ծանրանայ արտաքոյ Օսման-
եան սամանաց գտնուլ Հայոց վերայ որք թուով ամբողջ
աջգին կէսն են, նիւթական և բարոյական կարողու-
թեամբ ալ ազգին մեծ կէսն։ Այդ ցրուեալ են, սակայն
մարմին կազմելու յանգունս աւելի գիւրութիւն ունին,
վասն զի մամուլ, թղթակցութեան, ուղեւորութեան և
հաւաքման ամենայն ազատութիւն կը վայելեն։

Գիտեմք թէ Հայ գաղթականութեանց մէջ կան մեծ և փոքր Հայրենասիրական միութիւններ, որք օգտակար եղած են և պիտի լինին մեք բոլորով որտիւ ինպատեմք այդ միութեանց եւ հարկաւոր ալ կը համարիմք որ նոցա գոյութիւն յաջողութեամբ պահպանուի: Բայց նա և խորապէս համոզուած եմք թէ բոլոր այս միութիւնք և բոլոր Հայք Ռուսիոյ, Եգիպտոսի, Եւրոպայի Հնդկաստանի և Ամէրիկայի և Պարսկաստանի կրնան և պարտին ազգային տիեզերական կեդրոն մի հաստատել Տաճկաստանէն և Ռուսաստանէն դուրս, Եւրոպեան ազատ հողոյ վերայ: Պէտք է որ այս գաղթականութիւնք իւրաքանչիւր հրաւիրուին առանձին ժողով ընել, ընտրելիներ նշանակել, և քուէարկութեամբ ընտրել այն Հայեր որք անդամ պարտին լինել կեդրոնական Ազգային մարմնոյն կամ Յանձնախմբին: Այս Յանձնախմբի պիտի լինի, ուրիշ բացատրութեամբ, «Ազգային ժողովն», և Հայ գաղթական աշխարհին ներկայացուցիչն և գլուխն պիտի ճանչուի, և պաշտօն պիտի ունենայ ազգային ոյժերն և Հայրենասիրական ջանքերն կազմակերպել և վարել, ինչպէս նա և օտար Տէրութեանց առջեւ պաշտօնական ներկայացուցիչն լինիլ:

Ձկարծուի թէ մեք անիրազեկ եմք միքանի տարի առաջ այս ուղուղութեամբ եղած վիժեալ փորձին բայց այդ պատճառ մի չէ որ վերստին չփորձեմք մանաւանդ այժմ երբ Հայրենիք դժբեղակ ճգնաժամու մէջ է և գաղթականութիւնք աւելի հասուն և գորաւոր են:

Նիւեօքքի և Փարիզի Հայրենասէր ազգայինք արդէն սկսած են քննել այս կենսական խնդիր և յուսամք թէ ի մօտայ այլ գաղթականութիւնք ևս պիտի աջակցին իրացունելու համար այսպիսի փրկաւէս խորհուրդ մի: Եւ մենք, որպէս զի աւելի որոշ գաղափար մի տամք թէ ինչ եղանակաւ կրնայ կազմուիլ և ինչ ստորոգելիք կրնայ ունենալ առաջարկեալ կեդրոնն, յառաջիկայ թուով պիտի հրատարակեմք ծրագիր մը ի բննութիւն գաղթականութեանց:

ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՊԱԳԱՅՆ

Ա.

Ազգաց տկարութիւնն ու զօրութիւնք, կեանքն և մահն հաստատուն օրինաց ներքեւ են ճիշդ ինչպէս անհատին: Ժողովրդոց յաջողութիւնն և չաջողութիւնն այնպէս անկախ է բաղդի ազգեցութենէ որ պէս անհատիցն: Ամէն անհատ չկրնր յանձին կենսարանական այն պայմաններ որոց զօրութեամբ միայն կարէ նա ապրիլ հզօր և երկար կեանք, և ոչ ամեն ժողովուրդ օժտեալ է այն պայմանօք որոց չնորհիւ կրնայ լինիլ ազգ մեծ և տոկուն: Որքան ժողովուրդներ զարգացման նախնական աստիճանաց մէջ կառեալ կասեալ են, մինչ այլք յամբ բայց չպունակ յառաջդիմութեամբ հասած են քաղաքակրթութեան բարձրագոյն կայաններն: Պատմութիւնն ծածկուած է վիժեալ, յօշոտեալ, մեռեալ ցեղերու և պիտութեանց կողմ

րով, և կ'ընծայէ մեզ ազգաց յաջողութեան պայմանաց մասին յորդառատ բացատրութիւններ: Է՞ր մին կ'ուզանայ մին մինչ միւսն կը մնայ վատոյժ Է՞ր մին անհղատահ գետոյ համեմատութիւններ առած դրացի զօրութեանց թումբերն կը ճեղքէ կ'երթայ յառաջ, մինչ միւսն կը մնայ առուակ աղաղուն և յընթացս իւր սակաւ առ սակաւ ծծուելով կը լինի աներեւոյթ:

Հայ ազգն իբր ազգ որ անկեալ է բայց ոչ բեկեալ, ցրուեալ բայց ոչ քայքայեալ, ծերացեալ բայց առողջ, զարմանալի առարկայ մէ շահեկոն ուսումնասիրութեան: Նա հանդիսատես եղած է Ասորեստանի, Պարսկաստանի, Յունաստանի և Հռովմայ ազգային ծննդոց, նա յուղարկաւոր եղած է իրեն հասակակիցքն եղող բազում մեռեալ ազգաց, և նման խոր ծերութեան հասած ալեւորի որ նոր ակունքներ ու հերք կը բուսցնէ, Հայն նորոգեալ կենդանութեան նշաններ կուտայ ի մեծ սքանչացումն աշխարհի, կը քայլափոխէ կորովով, բողոք կը բողոքայ, դէսք կ'առնու, պիտական աթոռներ կը սարսեցնէ և Տէրութեանց համակիր ուշադրութիւնը կը դրաւէ գիւցաղնական մըցմամբ ընդդէմ մահուան և խաւարի:

Ի տես այս անսկնկալ ցոյցերու արժան է հարցնել թէ արդարեւ Հայ ազգն ապրելու զօրութիւն ունի՞: Իկեօք նորա ոյժերն ինչ վիճակի մէջ են յետ 1500 տմաց անընդհատ չարչարանաց: Երբեք սպառեալ է նորա կենսականութիւն և դատապարտեալ է նա օրինաց զօրութեամբ աներեւոյթ լինելու պատմութեան թատրէն որպէս այնքան ուրիշ ազգեր: Ապրելու բաղձանքն զոր կը ցուցնէ նա՛ կենդանացութեան նշան է արդեօք թէ նման է այն վաղանցիկ պատիր զգացման զոր ծերունին կը զգայ իւր վերջին գարնան մէջ:

Բ.

Պարտ է այս հարցմանց պատասխանել, և կարելի է: Իրողութիւնն և պատմութիւնն այժմ ապահովագոյն միջոցներ կ'ընձնուեն մեզ ժողովրդոց կենսականութիւնն փորձելու և դատելու: Ազգային շըրջափոխութեանց բնական ընթացքն և օրէնքներն լաւագոյն ևս ուսումնասիրուած լինելով՝ կարելի է ժողովրդոց անցեալէն գուշակել չափով իւրք նոցա ապագայն: Մեր դարն գիտութեան ինչպէս նաև պատմութեան դարն է գերազանցապէս: Հին ազգաց և Հայ ազգին վերայ առատ լոյս սփռած են պատմական նոր գիւտեր: Շամալիօնի, Որէրի, Լայարտայ, Պոգոյի, Ռուլինսընի և այլոց անխոնջ աշխատութեանց շնորհիւ անընթեռնելի եղաւ ընթիւնը, անխօսն իօսեցաւ և մեռեալք յարեան: Եգիպտական մեհենագրոյժից և բարեւոնեան ու Հայկական հին գրութեանց գաղանիքն արագասահ դարերու պշուցեալ աչաց առջև: Կը պուած մնալէ յետոյ ժողովրդին առջև պարզուեցան: Սիւն, բուրգ, կոթող, շիրիմ, ամենայն սկսան բարբառիլ և սքանչելիս պատմել հիացեալ մարդկութեան: Միջագետաց անապատներուն խորքէն վեր ելան պալատք, տաճարք, գրատունք և արձանք: Հզօր պիտութիւններ, յառաջագէմ քաղաքակրթութիւններ որք անցելոյն գիշերին մէջ հազիւ կը նշմար-

ուէին ընդ աղօտ, եկին իւրոյս, և մարդկութեան ան-
ցելոյն կորուսեալ կարծուած մէկ կարեւոր մասն
գտնուեցաւ:

Պատմական այս յորդ լուսոյ առջեւ Հայն ևս
կ'երեւի աւելի որոշ գծերով, նորա ճակատու-
խորշով, նորա ալեաց սպիտակութիւն, նորա վե-
հափառ դէմք աւելի յստակ կը տեսնուին, նորա
անցեալն կը լուսաւորէ զնեկայն և զապագայն:
Նորա պատանեկութիւն զոր կրնամք վերջացած նը-
կատել Ա. Տիգրանայ հօր Երուանդայ կենաց հետ
և զոր կարկատուն պատմութեամբ միայն կը ներկա-
յացնէ մեզ Խորենացին, ճգրտագոյն կը պատկե-
րանայ այն անխորդախ արձանագրութեանց մէջ,
զոր Հայաստանի թագաւորք ինքեանք դրել սուտ
են իրենց անձնական գործոց և պատերազմաց մա-
սին Հայաստանի անմահ ժայռերուն վերայ՝ բարբա-
րոս ձեռաց անմատչելի բարձրութեան մէջ: Այս
արձանագրութիւնք կը սկսին Ա. Սարխաւրիսի օրէն
սկսեալ, այսինքն 835 տարի նախ քան զՔս. Սէ-
լակունի թագաւորք և նոցա քարտուղարք, ոչ մի-
սէս խորենացի և այլ ոսկեղինիկ քրիչք կարող էին
ընթեռնուլ զայնս, որոց ուսումնասիրութիւն 1828 ին
միտին սկսաւ Շուլցի ձեռամբ և զոր այլ բազումք
դեռ կը շարունակեն:

Եթէ Հայաստանի քաղաքակրթութիւնն այն աս-
տիճան զարգացեալ էր ինն դար առաջ քան զՔս.
այդ բաւական է ցուցնել թէ արդէն բաւական հին
էր յայնժամ: Կարելի է ուրեմն առանց չափազան-
ցութեան ըսել թէ Հայն քաղաքակրթութեան զարգ-
կարգին մէջ իւր հաստատ դիրք գրաւած է իւր 4000
տարիներէ ի վեր, և թէ նա է այսօր, ըստ հասակի
իրաւունց, նախագահն ապրող քաղաքակրթ ազգաց:

ՉՀայ ազգն այսպէս ճոխացեալ լուսոյ մէջ քննե-
լով կարելի չէ՞ արդեօք նորա ֆիզիքական, մտա-
ւորական և բարոյական զօրութեանց վերայ մեր
գաղափարներ ճշդել, նորա հոգեբանութիւնն յօ-
րինել, նորա ընդունակութիւններն աւելի ճշդիւ
չափել և նորա մեծագոյն հնարաւորութիւններն
գուշակել:

Այս ուղղութեամբ նախապատրաստական փոքր
փորձ մ'ընելու պիտի յանդգնեմք:

Գ

Կ'առաջագրեմք ցուցնել թէ Հայ ազգն իւր շը-
ջափոխութեան ընթացքին մէջ կոսած է արտաքին
աննպաստ ազդեցութեանց պատճառաւ, և թէ նա-
կարող է Հայկական քաղաքակրթութեամբ մ'օժտել
զաշխարհ եթէ թոյլ տրուի նմա իւր ընդունակու-
թեանց ազգային գծովն յառաջ երթալ: Այլով
բանիւ ըսելով, Հայ ցեղն սպառեալ ցեղ մի չէ.
նորազօրութիւնք պատահութեան կը սպասեն իրենց
բորձրագոյն զարգացման հասնելու և իրենց լաւագ-
ոյն արդիւնքն աշխարհի տալու համար:

Մեր տեսութիւն պիտի հաստատեմք շրջափո-
խական վարդապետութեան վերայ, ուստի և նե-
րում կը խնդրեմք մի քանի խօսքով պարզել տալ
թէ ինչ է Շրջափոխութիւն:

Դ

Շրջափոխութիւն բառն որ եւրոպացւոց EVO-

lution ին համարժէքն է հայերէնի մէջ, ՅԱ-
ՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ հոմանիշ է, բայց աւելի գիտա-
կան և կատարեալ իմաստիւ: ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ կը
նշանակէ նշանաւոր փոփոխութիւն յանկարծական
արագութեամբ երևան եկած, իսկ ՇՐՋԱՓՈՒՈՒ-
ԹԻՒՆ կը ցուցնէ յամապէս կատարուող փոփոխու-
թեանց շրջան մի որ երկու ժամանակ միջոցներէ
կը կազմուի, յառաջդիմական և յետդիմական,
կամ ելուն և իջուն: Ծանօթ և պարզ օրինակ մ'է
սերմինն: Սերմն փոքր է չափով, պարզ է ձևով,
միատեսակ է նիւթով, եթէ կոտրես զայն՝ մէջն
կը գտնես անձիւ և անյարգ գոնգուտ մի: Բայց
այդ սերմ սերմանուելով և բնութեան ազդեցու-
թիւններն կրելով կը սկսի փոփոխութեանց երկայն
շարքի մ'ենթարկիլ: արմատ կը բռնէ, բուն կ'ու-
նենայ, ճիւղեր կ'արձակէ, ծիլ, տերև, ծաղիկ,
պտուղ կ'արտադրէ: Փոքր էր և եղաւ մեծ, նորա
մէջ բաժանում, մասունք և զանազանութիւնք չէին
երևիր, այսինքն պարզ էր և եղաւ բարդ՝ բազմա-
կերպ, և կը ներկայացունէ արմատ, ճիւղեր, տերև
ծաղիկ, պինդ և կակուղ մասեր, երակ և ծակափ
և պէս պէս գոյն: Դիտէ նաև այն զի անկոյն այլ և
այլ մասերն ազնուութեան կա գաւ եկին յերև. նախ
արմատ, բուն և ճիւղեր, տալ տերև, փոփոկ
ծաղիկ, պտուղ և բուրումն: Բայց այս ամենայն
կը բաղկացունեն միայն առաջին մասն շրջափոխու-
թեան: Այսմ կը յաջորդէ իջուն ժամանակամիջոցն
ամբողջ շրջանին: Տունկն կը տկարանայ, կը ծերա-
նայ և կը չորնայ:

Այսպէս է նաև մարդկային անհատն, որ կ'մեծ-
նայ, կը զօրանայ, կը շարգանայ կը ժամանէ ի-
գագաթնակէտ իւր մարմնական և բաւոյական զօ-
րութեանց, և ապա կը սկսի անկման զառ ի թա-
փէն սահիլ, իւր քանակ և կշիռ կը նուազին ամ-
քան զամ, իւր հասակ կը կարճանայ, իւր գործա-
րանք և զգայարանք աստիճանաբար կը կորուսանեն
իրենց կենսական կորով, և իւր իմացական կարող-
ութիւնք եւս կը կրեն նոյն վայր իջական փոփո-
խութիւններ: Մարդն ալ կը տկարանայ, կը կորա-
նայ, կը դողդոջէ, մոռացկոտ և յոգնալիտ կը
լինի, կը հիւսնդանայ և կը մեռնի:

Այսպէս են ընտանիքներ ևս. այսպէս են ազ-
գեր ալ որ մեծ ընտանիքներ են:

Ե

Հայոց պատմութիւնն գծադրարար ներքին
կենաց վերայ շատ բան աւանգած չէ մեզ,
այնպէս որ կարող լինեմք աւագ ընտանիքներու
ելուն եւ իջուն շարժումներն ճշդիւ նշանակել, սա-
կայն և այնպէս կը թուի մեզ ընդհանրել մեր
պատմութեան մէջ այսպիսի շրջափոխական շար-
ժումներ: Ա. Տիգրանայ հաւն Հոյկակ Բ. կը թուի
բաւական աւագ անձնաւորութիւն մի լինիլ և նոր
ընտանիք մի Հայկեան սերնդէն: Սորա որդին Եր-
ուանդ սակաւակեաց՝ չորեքամեայ թագաւորու-
թեան միջոցին շատ գործ կատարելու ժամանակ
ունեցած չէ: Բայց ահա յանձին Երուանդոյ որդ-
ւոյն Տիգրանայ Հայկակեան ընտանիքն կը հասնի
ի գագաթնակէտ իւր զարգացման: Սա մեծ ոք է

և իւր իշխանութեան ներքեւ Հայաստան աշխարհ
նախնայնի թաղապետութեան կ'ընդունի, որպէս կը
նկարագրէ Խորենացին. Տիգրան « մեծ իմաստ » ու-
նեցած է զինուորական հանճար և վերակազմած
է բանակն, և երկրին ներքին շինութեան միանգա-
մայն խնամ տանիլ գիտցած է. իբր քաղաքադէտ
և իբր զօրավար Տիգրան յարգելի հանդիսացած
է Մեծին Կիւրոսի, և Հայաստան արժանացած է
առանձնաշնորհումներու Պարսկական հսկայ պետու-
թեան մէջ. Տիգրանայ որդին և յաջորդն Վահագն
կը թուի նշանաւոր եղած լինիլ մանաւանդ մարմ-
նական ուժեղութեամբ, որպէս կերելի իրեն վերայ
երգուած բանաստեղծութիւններէն և պատմուած
առասպելներէն. Սա իրողութիւն յաճախ դիտ-
ուած է թէ երբ ուշիմ հայր մի քան զինքն
աւելի ուշիմ զաւակ մի կը ծնանի. այդ զաւակ
նուազ զօրաւոր քան զհայրն կը գտնուի մարմնա-
պէս. Երբ զաւակն ընդհակառակն նուազ հանճա-
րեղ է քան զհայրն, մարմնով աւելի ուժեղ է և
աւելի յաղթանդամ յաճախ. Այսպէս եղած է
յոննէին Վահագնի, որքան որ հնար է ընդն-
մաշել իրողութիւնն անցեւոյն մթութեան մէջ.

Առնունք ուրիշ ընտանիք մի Արշակունեաց
մէջէն. Վաղարշակ իմաստուն սը կ'երևի լինիլ Սո-
րա որդին Արշակ Ա. աստիճան մը աւելի վեր ե-
լած է. Արտաշէս որդին ևս աւելի վեր ելած է.
Վերջապէս սորա որդին Տիգրան Բ. ընտանեաց զօ-
րութեան լայնագոյն զարգացումն կը ներկայացնէ,
կը հանդիսանայ մեծ աշխարհակալ և հզօր իշխան,
ճշմարտիւ արքայից արքայ. Տիգրան լերան գա-
գաթն նշանակեց, իւր սերունդը աստիճանաբար
իջան դէպ ի խոնարհ. Արտաւազդ իւր հօր կորո-
վրն չունի, եռանդն և զինուորական տաղանդը,
թէև առաւել ուսեալ է քան զհայրն և գիտէ գը-
րիշ շարժել ճարտարութեամբ. Արաւազդէն յե-
տոյ երկրին թագաւորութիւնն յերկուս բաժանե-
ցու եւ միայն մէկ մասին իշխանն եղաւ որդին Տիգ-
րան, որ անշնչն թագաւոր մ'եղած է.

Նոյնպիսի ընտանեկան շրջափոխութեան շրջան
մ'ալ կը սկսի Վաղարշէն, Խոսրով գագաթն է, սո-
րա որդին Տրդատ իջնել կըսկսի. Տրդատ պնպէս է
իւր հօր Խոսրովին քով ինչպէս Վահագն է իւր հօր
Տիգրանին քով. երկու որդիք եւս Ֆիլիքական
գերակշռութիւն կը ցուցնեն իմացականին վրայ և
ի ծախս իմացականին. Արդիք լու են, լայց հարք
լաւագոյն եւս են. Իջուն շարժումն այդ որդւոց կե-
նօք կը սկսի. Տրդատայ որդին և թոռն արագապէս
սահած են դէպ ի խոնարհ.

2

Ազգեր եւս մի եւ նոյն շրջափոխական ընթաց-
քն կը կատարեն, միայն թէ աւելի երկար միջո-
ցի մէջ. Ազգի մի կեանքն ալ ելուն եւ իջուն ժա-
մանակամիջոցներ ունի, թէև ալ այդ երկու ժամանա-
կամիջոցք շարունակ և միօրինակ ելուն եւ իջուն
չեն, այլ նշանակեալ են փոքր ելեւէջներով. Յեղեր
կան անշարժութեան մէջ փակուած մնացած եր-

կար դարերէ ի վեր յԱփրիկէ եւ յԱվստրալիա, որ
պէս թէ իսպառ թափաւ լինէին քաղաքակրթու-
թեան սկզբնական ոյն թաքուն ընձիւղէն որ յըն-
թացս դարուց վերջապէս կը ցուցնէ ինքզինքը.
Իսկ այն ցեղեր որք ընդունակ են կամ վերջապէս
ընդունակ դարձած են քաղաքակրթութեան, իրենց
բարբարոս վիճակին մէջ դարերով կը հաւաքեն զօ-
րութիւն. եւ երբ իրենց գործարարականութիւնն և
ուղեղ կը հասնին այսինչ աստիճանի, ցունց մի կը
զդացուի ցեղ լին մէջ, եւ ահա ելուն շարժումն կըս-
կսի. Այն բարբարոս ցեղ որ ցայնվայր կը կենար ցը-
րիւ եւ անյարիր, և որոյ ընկերական մեծագոյն մի-
ութիւնն էր ընտանիքն կամ նահապետութիւնն.
կը միտի իկեդրոնացումն, եւ կը կազմէ ժողովուրդ
եւ նահապետութեան տեղ կուգայ թագաւորու-
թիւն, գիւղն իքաղաք կը փոխարկի եւ բարբարո-
սութիւնն իքաղաքակրթութիւն. Այս երեւոյթ Սա
ուղայց օրով կը ծագի առ Խորայէլացիս. Նոյնն ըս-
կած է մեր ազգին մէջ դարերով յառաջ քան զՏիգ-
րան Ա., բայց որքան առաջ՝ անկարելի է ըսել.
Եթէ Պարոյր է ալգարեւ Հայոց առաջին թագակիրն
ան չէ առաջին թագաւորն, ըստ որում, նոյն ինքն
Խորենացւոյ խօսքով, յառաջ քան զՊարոյր Հայոց աշ-
խարհն միոյ նահապետի կառավարութեան ներքեւ
էր, եւ քաղաքներ ունէր. Այս նկատմամբ Հայաստա-
նի սեպածեւ արձանագրութիւնը աւելի ստոյգ աղ-
բերք են ծանօթութեան եւ թոյլ կուտան մեզ հա-
ւատալ թէ մեր երկրին բոլոր ընդարձակութեան վե-
րայ նոյն կրօն, նոյն լեզու եւ նոյն ցեղ կը ախրէին,
և թէպէտ նահանգային նահապետներ կրկին սա-
կոյն կը ճանաչէին նոքա նախ երկու կամ երեք և
յետոյ միայն մէկ ընդհանուր թագաւոր.

Երբ ժողովուրդ մի կը յաջորդի վեւջապէս ելնել
յասպարէղ քաղաքակրթութեան, նոր կեանք մի կը
սկսի նոր պայմանօք. Կրնոր նա մնալ բարբարոս
վիճակի մէջ և կենդանական կեանք մի շարունակել
անպայման ժամանակաւ եթէ բարձրագոյն ցեղի մի
ի հուպ գալով չմտնուէր. Երբամ քաղաքակրթ-
շրջանն կը սկսի, այդ ցեղ կը սկսի նաեւ գործա-
ծել առատօրէն զօրութեանց թաքուն գումարն զոր
ժողոված է գործերով նորս առաջին միտումն
է գէպ յաշխարհակալութիւն՝ յարտաքին աճումն.
Յետոյ կուգայ ներքին շինութեան և արուեստից
զարգացման հոգն. զօրութեան կերայ կաւեւնայ
փափկութիւն, փռուաց վերայ՝ ճաշակ, հարստու-
թեան վերայ՝ քաղաքավարութիւն, սրոյն քով՝ գրիշ
Դարեր կենան անցնիլ սակայն մինչև որ ազգն իւր
դրացիներ զարնելով և կողոպտելով գոհ չլինի այ
փափաքի բարոյական յառաջգիմութեան եւ գոր-
ծածէ գրութիւն. Եւ սրովհետեւ Սարիաուրիս ա-
ռաջնոյ օրով, ինչպէս արդէն յիշեցինք, գրութիւն
սկսած էր մեզ (եւ ո գիտէ թէ Սարիաուր խորե-
նացւոյ Պարոյրն չէ) պէտք է որ մեր երկրի քա-
ղաքակրթութիւնն շատ դարեր յառաջ սկսած
լինէր.

Բայց իրողութիւնն է այն թէ երբ ընտանիք մի
կամ ազգ մի իւր զարգացման ծայրագոյն աստի-

ճանին կը հասնի, անդ չկրնար մնալ յաւիտեան, այլ յօրինաց մղեալ պիտի սկսի իջնել: Համարեալ ուժերու պաշարն մեծ առատութեամբ գործածելով միայն կրնայ նա աւել մնալ թործը դրից մէջ, և քանզի իւր զօրութիւնք անսպառ չեն, իւր բարձր գիրքն ալ մշտնջենական չկրնար լինիլ: Իւր զօրութիւնք բազում տարբեր եղանակօք կը սպառին: Երկրին մէջ հարստութիւն կայ, աստիճաններ կան, ճարտարութիւններ կան, հետեւապէս անհատք բոլոր ուժով կը մրցին ձեռք բերել հարստութիւն կամ աստիճան կամ ճարտարութիւն: Եւ յոգեամբ այս մրցման մէջ ոմանք յաջողին, ինքեանք կամ իրենց սերունդք կը փորձուն անձնատուր լինել վոյեւելքներու: Հաճոյից և զրօսանաց, և պէսպէս չափազանցութեամբ կը սպառին ոյժերն:

(Շարունակելի)

Պ. ՃԵՅՄՍ ՊՐԱՅՍ Ի ՆԻԻ ԵՈՐՔ

Նիւ եօրքի և շրջակայից Հայ գաղթականութեան համար յիշատակելի օր մ, եղաւ նոյնի 5-ը, յորում վաշեցին նշանաւոր Անգղիացի Հայասէր Պրայսի այցելութիւնն: Հայոց երկսեռ բազմութիւնն ժողովեալ էր կըրէնտ Օքէրայի շէնքին մէջ տեսնելու այն մեծանուն օտարականն որ ասած էր զՀայաստան Մասեաց գաղաթէն, և լսելու զայն որ այնքան յաճախ և այնքան պերճախօսութեամբ ատենախօսած էր Բրիտանական բաղամէնթին մէջ ի պաշտպանութիւն Հայ դատին: Յանուն Հայ գաղթականութեան մի ուղերձ կարգացուեցաւ, Տիկին ոմն Հայերէն երգ մերգեց սրտայոյզ և նախագագահին կողմանէ համառօտ խօսքով ներկայացուեցաւ Պրայս, որ խօսեցաւ իւր 40 վայրկեան, լրագրապետի մը հմտութեամբ լրոց, քաղաքագիտի մը զգուշաւոր բացատրութեամբ բազմահմուտ ուսուցչապետի մի իմաստութեամբ, և Անգղիացի ճէնթմէնի մի բարձրագոյն ազնուութեամբն ու պարզութեամբ միանգամայն: Հայ ժողովն ալ դիտցաւ տառապեալ ազգի մի երախտագիտութեամբ և յուսալից ցեղի մի խանդովն ու եռանդովն ծափահարել, ծափահարել և դարձեալ ծափահարել Հայասիրին խօսքերն, թաշկինակ ծածանեցունել և կեցցել աղաւաղօք երկարօրէն թնդացունել սրահն Փռնանական իմն աւելնով: Պ. Պրայս մեկնեցաւ յոյժ գոհացեալ և յոյժ գոհացուցիչ տպաւորութեանց ներքեւ: Հայոց ուղերձին թարգմանութիւնն պիտի հրատարակենք յաջորդ թուով:

ՄՆՈՒՆՈՒՔ

Մի օր Ահերիկայի Տնկնոջ մը հետ կերակրոյ վերայ կը խօսակցէի, և Ամերիկեան խոհարարութիւնն չէի գովեր: Դուք կ'ըսէի, աւելի փաթաթէս կուտէք քան թէ հաց թէ և հացն առաւել սննդարար է քան զփաթաթէս, և ձեր առաւօտեան նախաճաշն աւելի ծանր է քան թէ կէս օրի կերակուրն:

Դուք ինչ կուտէք առաւօտեան, հարցուց Տիկինն: Ժամանակէ մ'ի վեր, պատասխանեցի, սոգոր եմ ամէն առաւօտ ուտել երկու վառեակ:

Եեկու վառեակ, դստեց Տիկինն, և տակաւին կը մեղադրէք զմեզ իբր շատակեր յառաւօտու: Եւ ինչ ձեռով կուտէք վառեակներն, խորոված թէ խաշած:

— Պաշած, կ'ուտեմ վառեակներուն ոչ միայն միանայլ և ոսկորներն:

— Վախեմ կսուցն և մագիլներն ալ, ըսաւ ծիծաղելով:

— Անշուշտ, կտուցն և մագիլներն ալ:

Տիկինն ծիծաղելով հանդերձ կը թուէր հանելուկ մի լուծելու զբաղած:

— Կատակ չեմ ըներ, Տիկին, ըսի, միայն թէ իմ վառեակներ յոյժ դեռահաս են այնպէս դեռահաս որ դեռ ոսկորներն կարողի նման կակուղ են և մսերն աւելի ևս կակուղ...

— Հոսկայ հոսկայ, գոչեց Տիկինն գոհ ձայնիւ, ամէն առտու երկու հաւկիթ կուտէք:

— Եւ անշուշտ զայն ևս կատարելապէս կը հասկնաք թէ մէկ հաւկիթ գիտնօրէն հաւատար է մէկ վառեակի: Հաւկիթն վառեկցու մը է, այսինքն մէկ վառեակի միան ոսկորն, կտուցն ու բոլոր անդամներն կազմելու նիւթերն իրովին կը պարունակէ:

— Այո, կը հասկնամ զայդ, գիտեմ մանաւանդ քան թէ կը հասկնամ ժամանակաւ վարժարանին մէջ կը խօսուէր թէ հաւկիթն կատարեալ սնունդ մ'է այնու զի մարմնոյ բոլոր տարրերն կը պարունակէ:

— Զեր դասատուն նոյնն կրնայ ըսած լինիլ կաթին ևս նկատմամբ, որ յոյժ կատարեալ սնունդ մ'է: Հացն ևս, զոր դուք Ամերիկացիք շատ չէք սիրեր, և սիրողներն ալ քիչ կը մնայ մեղադրէք, նոյնպէս կատարեալ սնունդ մ'է: Մարդ կրնայ լիկ հաց ուտելով և ջուր խմելով ապրիլ քաջառողջ: Միան ևս կատարեալ սնունդ մ'է, զոր դուք կը յարգէք յոյժ, չընեմ չափազանց: Առաւօտ, կէս օր, երեկոյ, միան անպակաս է ձեր սնունդն:

— Իրաւունք ունիք կարծեմ: Ոմանք կարծեն թէ մեք չաքար ալ կարի շատ կ'ուտեմք:

— Դիտած եմ, մանաւանդ ձեր դեռահասներն, որք պէս պէս չաքարեղէններ ուտելն չեն յափրանար: Բայց ես այդ մասին չեմ քննադատեր Ամերիկացին: Մեր Հայաստանի մէջ ևս տղայք քաղցրեղէն կարի շատ կ'ուտեն թէպէտ ոչ միշտ չաքարի ձերն տակ: Մեծ քանակութեամբ կը սպառեն թուր չամիչ, թթի մեղր, պատտեխ և այլ չաքարաշատ բաներ որոց համապատասխանող Անգղիերէն բառեր չկան: Նաեւ մեր երկրի մէջ խաղովն, ծիրանն, սալորն, ու դեղձն անքան քաղցր են որ գրեթէ չաքարի նման կ'այրեն բերանն: Մեր տղայք ահա այդ ձեւերու ներքեւ կը վայելեն չաքարն և կարծեմ, նուազ չեն ուտեր քան ձեր տղան: Բնազդօր մ'է որ զայնս կը մղէ անուշեղէն բաներ ուտելու, վասն զի նոքա, տղայ հասակի մէջ աւելի պիտք ունին վառելիք նիւթի քան թէ չափահասներն, և չաքարեղէնք իբր փայտ վառուելու կը ծառայեն մեր ներսի դին:

— Երբ կ'ըսուի թէ տղայք աւելի պէտք ունին վառելիքի կամ ջերմութեան, չեմ հասկնար թէ ինչու: Նոյա արիւն աւելի տաք չէ կարծեմ քան զչափահասին:

— Տղայն, պատասխանեցի, աւելի ջերմութիւն յառաջ բերելու պէտք ունի որովհետեւ աւելի ջերմութիւն կը վատնէ քան զչափահասն: Եւ աւելի կը վատնէ վասն զի նորա մարմին համեմատօրէն աւելի մակերես ունի և նուազ քանակութիւն քան զչափահասին, Ըստ որում տղայն և չափահասն մի և նոյն ձեւն ունեցող երկու մարմիններ են, չափահաս մի որոյ չափերն կրկնապատկւելն են աղու մի համապատասխան չափերուն, իւր մակերես չորս անգամ աւելի մեծ պիտի լինի քան զտղուն և հետեւապէս չորեքպատիկ աւելի տաքութիւն պիտի կորուսանէ քան զայն: Բայց, ասոր հակառակ իւր մարմնոյ քանակութիւնն լինելով ութ անգամ աւելի քան

դառնալու ասիական տեղի տաքութիւն կ'արտադրէ քան
չայն « Բելաշապէ » վրոք երկու անգամ նուազ կը պաղի
իւր մարմին քան զողջը : Այս կրկնապատիկ ծախուց
բաւելլու համար բնական է որ ողայն աւելի վառելիք
նիւթ ներս նետէ իւր ներքին վառարանաց մէջ որպէս
զի կարող լինի պահպանել իւր ջերմութեան բնական աս-
տիճանն : Այս սկզբան համեմատ փոքր կենդանիք բազ-
մաթափ շատ աւելի կ'ուտեն քան խոշորներն , որով-
հետեւ աւելի սպառելու ստիպուած են : Մարդս իւր
մարմնոյ մէջ մի հազար կրամին համար ժամն որքան
թթուածին որ կը ծախսէ , աղաւնին անոր 15 անգամն
կը վառնէ , և մեկն՝ 17 անգամն :

— Ինչ են ձեր երկրի մէջ գործածուած գլխաւոր սը-
նունդներն :

ՄԱՆՂԷՆ , ԲՈՒՄԵՂԷՆ , ԻԻՂԵՂԷՆ , ԵՐՄՊԵԼԻՔ , որք
աննդեան չորս տեսակներն են անդ ինչպէս աստ : Մսե-
ղինաց կարգէն ոչխարի միսն և ձուկ շատ կը գործածեն ,
բայց թուրքաւորներն ու պատենաւորներն կարի սակաւ
և միայն ծովեզերեայ քաղաքաց մէջ , Բուսեղլինաց կար-
գէն ունիմք ընդեղէններ , բանջարեղէններ և պտուղներ :
Իւզեղլիներէն՝ ձկն և կարագ : Ճրագուն կը վառնէ :
Ըմպելիք առատ է , ընտիր ջուր մաքուր առանց քամուե-
լու , պոպ ասանց սառուցի , աստառ առանց վճարման :
Համեմական ըմպելեաց գալով աւելի կը գործածենք
սուրճ քան թէյ : Իսկ ոգելից ըմպելիքներէն գլխա-
ւորապէս գինին է Հայաստանեւոց զմայլեցուցիչն , թէև
օղի ևս սկսած է գործածուիլ :

— Դուք այդ չորս կարգի աննդոց որոնք աւելի
յարգ կ'ընծայէք :

— Ամէնն ալ լուս են պատշաճ չափերով : Մնունդ
մի կրնայ դատուիլ երեք նկատմամբ որք են ՀԱՄԻ-
ՂՈՒԹԻՒՆՆ , ՍՆՆԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ և ՄԱՐՍԱԿԱՆՈՒ-
ԹԻՒՆՆ : Սննդարարութիւն կերակրոյ ըսելով կը հաս-
կրնամք նորա սնուցիչ արժէքն մէկ կերակուր կը
պարունակէ մարսելի և անմարսելի սարքեր , մարսե-
լին կը հալի մարսողական գործարանաց մէջ և ծծուելով
կը փոխարկուի յարին և ի մարմին , իսկ անմարսելին
դատուելով մարսելիէն՝ կը հաւաքուի աղետաց ստորին մա-
սին մէջ և դուրս կ'արտաքուսի : Կերակուր մի այնքան
աւելի աննդարար է որքան աւելի մարսելի տարր կը
պարունակէ և նուազ անմարսելի նիւթեր : քան զա-
մենայն աննուգարար կերակուրներն են ժողովնք , ա-
պա բուսեղլինաց ընտելն սեռակներն , իսկ աղքատ
տաւելիք են գոլումի՝ վարունքի և ճակնդեղի նման
բանջարեղէններն որոց մէջ մարսելի տարրն կարի սա-
կաւ է : Քան զամենայն աննդարար կերակուրք
միշտ քան զամենայն մարսականներն չեն սակայն :
Կերակուր մի այնքան աւելի մարսական է որքան
աւելի մեծ քանակութեամբ նորոգիչ տարրեր կ'ըն-
ծայէ արեան և որքան նուազ ոյժ կը պահանջէ
ընդ հակառակն մարսողական գործարանաց մէջ հալուե-
լու և ծծուելու համար , Քան զամենայն մարսական սը-
նունդն է կաթն , որ ճոխ է և կատարեալ իրր կերակուր
և միանգամայն կարի դիւրամարս : Հաշիւ իս գովելի է
այս նկատմամբ : Հարիւր կրամ հացին 45ն ջուր է , 45ն
նշայ , 6ն բորակահումտ նիւթեր , 4ն չաքար , մէկն՝ իւղ ,
մէկն՝ զանազան հանքային տարրեր : Եգիպտացիներն չը-
շանակելի է իւր իւղաշատութեամբ , ըսքս որով՝ 100ին 7ն
իւղ է , մինչ գարիին 100ին 5ն իւղ է , և երկին՝ 200ին 1ը :

— Փաթաթէսին մէջ որքան է իւղն , ընդ միջեց Տի-
կինն :

— Տիկին կ'ամաչեմ րոնի որ , 1000 կրամին մէջ հազիւ
1 կրամ իւղ կը պարունակէ փաթաթէսն , այսինքն , այդ

նկատմամբ տասնապատիկ աղքատ է քան զհաց : Ամերի-
կացիքդ այդ թերի կը լնուք առատ կարագ քսելով փա-
թաթէսին վրայ :

— Բայց կարա՞ն գէշ սնունդ է զայն փաթաթէսին
հետ չափով խառնելով աւելի աննդարար և աւելի կլա-
նելի կը գործենք , ըսաւ Տիկինն ժպտելով :

— Կարագն գէշ սնունդ է չեմ ըսեր : Այն ևս չաքա-
րի նման վառելիք մ'է մեր գործարանաց համար , եւ
եթէ աւելի ուտենք իւզեղէն քան որչափ կրնայ մեր
մարմնոյ մէջ վառիլ սպառիլ օրական պիտոյից համար ,
աւելցած իւղն կը հաւաքուի մորթին տակ իբր պաշար
նեղ , փամանակի համար , երբ հիւսկեղութեան ,
սովի կամ ծովապահութեան բռնուելով և անբաւական
սնունդ առնելով դրսէն՝ ստիպուիմք մեք զմեզ ուտել ,
նախ և առաջ մեր իւղի ամբարներն կը գործածենք , վա-
սն զի իւղն գործարան չէ , այլ գործարանաց պահպան
և իբր թէ երեսարած : Սակայն կարագն բոլորովին զուրկ
է բորակածնուտ և հանքային նիւթերէ : Մնունդ մը կա-
տարեալ լինելու համար պարտի ոչ միայն ջուր , աղեր ,
վառելի նիւթեր չաքար կամ իւղ պարունակել այլ և
բորակածնուտ նիւթեր՝ որոց գլխաւորներն են սպիտին
կոչուածն , որոց ընտանի օրինակն է հաւկիթին սպիտա-
կուցն , թելինը , որ մարմնոյ թելակերպ հիւսկէններուն
նիւթն լինելով այնպէս անուանուած է , Պանրինը , ա-
նոն որ արուած է այդ նիւթին վասն զի պանրին է-
ական տարրն է , և բանջարինը , որ բանջարեղինաց մէջ
գտնուող բոյրակածնուտ նիւթին կըսուի :

— Այդ սնունդներ ժամանակին լաւ եմ և մոռցած ,
բայց շնորհակալ եմ ձեզ անդեան մասին այս հետաքրք-
րական և հիմնական տեղեկութեանց համար :

— Իսկ եսներում կը խնդրեմ ձեռնէ եթէ փաթաթէ-
սին ուկարագին բաւարան գովեստ չ'իտեսցայ :

— Անշուշտ ներեալ է ձեզ որ կարող էք ամէն
առաւօտ երկու վառեակ ուտել , կարագն ու փաթաթէսն
ինչ ընէք դուք , ըսաւ Տիկինն , և բաժնուեցանք :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

1891 Տարւոյ արձանագրելի ազգային դէպքերու
մին էր այն զի Տ . Մ . Չերազ մշտնջենաւոր հրաժեշտ առ-
նելով Օսմանեան մայրաքաղաքէն՝ նետուեցաւ իւնտրա
բոլորովին ազգային դատին նուիրուած : Ուրախ եմք
տեսնել թէ իւր « Արմէնին » որ ամսօրեայ էր և Գրան-
սերէն , այժմ վերածուած է կրնամեսայ և երկնզուեան
թերթի : Անգղիերէն և Գրանսերէն : Մեր Ամերիկա-
բնակ համազգիաց շատին ջերմ բաղձանաց կը պատասխա-
նէ այս փոփոխութիւն : և տարակոյն չեմնիմք թէ այս
տարի բաժանորդներու ստուարագոյն թիւ մի և բազում
Ամերիկացի ընթերցողներ պիտի ունենայ այն թերթ ,
որոց Խմբագիր—Տնօրէնն մասնագիտական համալսեամբ
կը պաշտպանէ հայ դասն քաղաքակիրթ աշխարհի
առջև :

Ամերիկեան Մամուլն բաւական կը զրազի Հայկական
խնդրով և Նիւ-Եորքի թերթից մէջ յաճախ կը տեսնուին
խորագրականներ և ընթացիկ լուրեր Հայոց նկատմամբ
ԲՐԻՍՉԵՐՆ ԻԻՆԻՆ չաքաթաթերթն իւր մէկ խմբագ-
րականին մէջ կոչ էթէ Հայք , այս պարագայից մէջ
չգիտնանք զի քիսկի փոփոխութիւն , պիտի լինէին
չմարդկային արարածներ : Գ . Սգուայրս Ամերիկացի
իրաւագէտն որ միանգամ ատենախօսից Հայ գաղթակա-
նութեան ընդհանուր ժողովոյն մէջ , Հայկ . խնդրոյն վրայ
ընտիր յողուած մի հրատարակած է ԲՐԻՍՉԵՐՆ ԻՆԲՈՒԱՅ
ԲՐԻՆ Նոյ , 13 թիւոյն մէջ :

PHARMACIE FRANÇAISE,

NORBERT FRANK.

311 7 Avenue,

NEW YORK.

Դեղորև եւ քիմիական նիւթք.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով.

H. EGUINIAN,

BOOK, JOB AND NEWSPAPER
PRINTING,

100 Centre St., New York City.

Պ. Քիթրոն Լոյտ, Անգլիոյ Հիւպատոսն ի Կարին, կ'ըսէ ի Կ. Պօլիս խորհրդակցելու համար Սըր Ուիլիամ Լոյտի հետ հայտնի դերայն վերայ. — Մէջ մէջ նորէն բանտարկուած են 72 Հայեր մէկ անգամին. Պաշտօնը մէջ երեք Հայեր այրուած են հնձոյ խարուկի մի վերայ դրուելով. Թուրքը չորս Հայ հարսներ առեւանգած են Մոսկովան. Ընդհարմուն մէջ որ Հոկտ. ի վերջերէն տեղի ունեցաւ Հայոց և Տաճիկ զօրաց միջև Ռուսերէն թուրք սահմանագիծուն վերայ. եօթն թուրք սպանուած և 15 վիրաւորուած են. — Կրօնական ժողովոյ նոյ, 1 ի նիստն կառավարութեան կողմէ արգիլուած է Կեր. Խորէն Արքեպիսկոպոս Նարայկ նախ աստիկանութեան նախարարին ապա Տէվրիշ փաշայի կողմանէ հարցաքննուած է իւր Ռուսական ուղեւորութեան մասին:

Բալ Մալ Կապէթի թղթակցաց մին կը տեղեկագրէ իւր մէկ տեսակցութիւնն Մուսայ Պէյի հետ ի Բորդ Այալիս, եւ մէկ գնացող նաւուն մէջ. Աքսոր դնացող աւազակապետին դէմքն կը նկարագրուի իր կատարելապէս արժանի անգութ ոճրագործի մի. Մուսա Հայերէն և Տաճիկերէն կը խօսի և քիչ մ'ալ ձրանսերէն կը կակազէ. Հարցմանց կը պատասխանէ բարրարիկ ազատաստութեամբ և զՍուլթանն կը կոչէ իւր անձնական բարեկամն. Ըսած է նաև թէ երբ Եւրոպոյ վիճքն մոռնայ, Սուլթանն պիտի բանայ իւր բանտին դռներն վասն զինա կը բազմայ իւր վերագործին:

Ձէյթունի ապստամբութեան մասին Անգլիական թերթք, և Մանչէսթըր Էկզէմինըր մատուցող ապագայ յաջողած են աւելի ստույգ լուրեր ստանալ. Թրքաց չորս զօրագնդերուն և Ձէյթունցոց միջև ընդհարումն տեղի ունեցած է Հոկտ. 24 ին, յորում հայք փայլուն յաղթութիւն ասարած են. Թղթակցի մի Իսկէնտարունէն գրելով կը պատմէ իւր մէկ տեսակցութիւնն թուրք տեղակալի մի հետ, որմէ կիմացուի թէ Օսմանցոց կորուստն սարսափելի եղած է. Ըստ զրուցուց ինչ, Օսմանցոց կորուստն, մեռեալ, վիրաւոր և գերի բռնուած, 50 000 կը հասնի ընդ ամենայն, թիւ մի որ զգալապէս չափազանցեալ կերևի, և սակայն կը ցուցնէ թէ ինչու կառավարութիւնն այնքան հոգ կը տանի լրոց Տաճիկասանի մէջ և անկէ դուրս տարածումն արգիլելու:

Վեհ Մակար Կաթողիկոսմէկ Սրբեպիսկոպոսէ և երկու Եպիսկոպոսներէ բաղկացեալ պատգամաւորութիւն մի մտադիր է լրկել ի Կ. Պօլիս, դժուարութեանց վաղ ընդ փոյթ լուծումն պահանջելու համար Բ. Դռնէն:

Ռուսիոյ մէջ հակաթրքական զգացմունք գրգռեալ են. Ռուսական բարձրագոյն շրջանակաց մէջ հետզհետէ աւելի ուշադրութիւն կը նուիրուի Հայոց խնդրոյն և մամուլն կը պնդէ որ այդ խնդիր լուծուի Եւրոպական Պետութեանց միջամտութեամբ որ Հայաստանէն արտաքսուին նախ թուրք կառավարիչք և պաշտօնեայք, և փոխանակ կարգուն քրիստոնեաներ. Լոնտոնայի «Տէյլի նիւզ» ն հետեւեալ տողերն կոչում կը նէ Ռուս թերթէ մի. «Մեր այժմու Եւրոպական պարծեցեալ խաղաղութիւնն ճամարիտ անէծք մ'է Հայոց համար... խաղաղութիւնն վրդովելու երկիւղն զսպած է ամէն մարդասիրական զգացում և կարեկցութիւն այս Հարաշար հարստահարեալ և վայրագօրէն անիրաւեալ ժողովրդեան համար»: Միւս կողմանէ կ'ըսուի թէ Ռուսական զօրք կը համախմբուին Օսմանեան սահմանագրի մէջ վերայ և թէ Զարեհի Հնդկոտան պիտի երթայ և հիւրընկալուի Անգլիական փոխարքային. Եթէ Ռուսիայ և Անգլիայ միջև յարաբերութիւնք աւելի մը տերմանան և հասկացողութիւն մի գոյանայ, որպէս կը թուի թէ Զանք կը լինի առ այդ, յայնժամ Հայաստանի հիւսիսային դրացին պիտի չփարանի բուռն միջամտութեամբ մի խաղաղել ամեն ինչ:

Միացեալ Նահանգաց Հայ գաղթականութիւնն զգալապէս ստուարացած է այս տարի, և սղգային գործունէութեան մէջ բաւական ժրտութիւն կը ցուցնէ. Մեծագոյն կեդրոնք են Ուսթըր, Նիւ-Եորք և Բալթիմորիս. Հայր Սարաճեան Մ. Վ. անխնայ աշխատուել և յարատեւութեամբ ի գլուխ մանելու վրայ է առաջին Հայկական եկեղեցոյ շէնքն Ուսթըրի մէջ. Կը յուսամք յառաջիկայ թուով այդ եկեղեցոյ աւարտեալ շինուածոյն և մեր գաղթականութեանց վերայ ընդարձակ տեղեկութիւն տալ:

Միւրափոխ կոչուած ահաւոր հիւանդութեան համար որ նաև թուրքիստ, Հալլումաշ և գնտախտ կ'անուանի, բուժման ազդու եղանակ մի գտնուած է Գերմանացի բժշկապետ Քոխի ձեռամբ. Այս այն բժիշկն է որ 1883 ին գտաւ այս ախտին պատճառ եղող մանրաճճիներն. շատեր կըսէին թէ ինչ օգուտ է ախտին մանրացուցական գործիչներն երևան բերել, պարտ է ախտն բժշկելու հնարն գտնել. Ահա այդ ևս գտնուած լինիլ կը թուի յուրախութիւն բովանդակ մարդկային սեռին. Քոխի փորձք ապացուցած են թէ ծիրախտն կենդանեաց վերայ կրնայ բժշկուել, և ծիրախտի արտաքին արտայայտութիւնքն, որք մարդուն մորթին վերայ կ'երևին, նոյնպէս կը բժշկուին ապահովապէս. ինչպէս նաև ներքին գործարանացն, զոր օրինակ թոքոցն և ողեացն եթէ շատ յառաջ գնացած չեն. Այս բուժիչ դարման դեռ մէկ տարեկան գիւտ է, և մեծ յոյս կայ թէ կատարելագործուելով պիտի հանդիսանայ աւելի ազդեցիկ. Վարակիչ ախտերու մանրաճճական վարդապետութեան հայրն է Ֆրանսացի մեծանուն տարրաբանն Բասսէօր, որ իւր փորձերով հաստատուն հիմն դրած է այն հիւանդի յառաջդիմութեանց զոր բուժելու արուեստն ըրած է վերջին քսան տարուան մէջ:

ՆԻԻ ԵՈՐԲ, — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ: